

9(47-925)

17-71

Издательство
Е. С. Липин
Университет

19 AUG 2006

Ն. ԳՈՒԵՆՍ ԵՒ Ա. ԽԱԶ

№ 9470

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ի Ն Հ Ա Յ Ե Ր Ի

Պ Ր Ա Կ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Յ Ե Ր Ը

Փրանսիերեն քննարկից Թարգմ.

Ռ. ԲԱՋԻԵՐՈՒՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՏՐՈՆԱԳՐԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆՅԱՆԻ ՊՈԼԻՏ. Դ.

1909

x 98x

9(47.925)

2011-08

7-71 ս.ս.

Ն. ԴՈՒԵՆՍ ԵՒ Ա. ԽԱԶ

ՊԵՏՐՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԻ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ

Փրանսերէն ընտրից Թարգմ.
Ռ. ԲԱԶԻԲԻՐՈՒՆԻ



1004
16820

7



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԲՏՐՈՆԱԳՐԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵՍԻ ՊՈԼԻՑ 7.
1909

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ

I

Քաղաքակիրթ ազգերի մեծամասնութիւնն Արմէն ասելով հասկանում է մի ազգ, որ նշանաւոր է իւր ծագման հնութեամբ, հոշակաւոր՝ իւր անցեալ փառքով—որ ձեռք էր բերել Ք. ա. առաջին դարում—և ոչ պակաս յայտնի՝ իւր սարսափելի դժբախտութիւններով, որին ենթակայ է այժմ: Չկայ մի բան աւելի կրթիչ քան այդ ազգի պատմութեան ընթացքը, նրա ելևէջները: Եւ ինչէլ որ լինեն այն մեղադրանքները, որոնք առաջ են եկել երբեմն նրա վարմունքի պատճառով, ինչէլ որ լինի այն արհամարհանքը, որին թւում է թէ արժանի է իւր բնաւորութեան որոշ գծերի համար—այնուամենայնիւ չի կարելի չհիանալ այն յարատեւ տակունութեան վրայ, որով նա կարողացաւ պահպանել իւր սեփական կենսունակութիւնը, իւր լեզուն, իւր բարքերը, իւր աւանդութիւնները, քրիստոնեայ դառնալուց յետոյ նոյնիսկ իւր կրօնը, առանց երբէք համաձայնելու զիջել իւր ազգութիւնը,

որը Արևելքում շփոթւում է կրօնական պաշտամունքի հետ. նա պահեց այս բոլորը փոփոխակի, ոխերիմ ու յարատե տիրապետութիւնների լծի տակ, իւր արկածալի կեանքի ամբողջ ընթացքում:

Միւս կողմից՝ մարդ ստիպւած է լինում ընդունել, որ այն կիսավայրենի երկրում, — ուր դեռ ապրում է այս ազգի անդամների կէսը — այն դժնեայ բարձրավանդակի վրայ, որ կրում է Տաւրոս և Արարատ լեռները, այս փոքրիկ ժողովուրդն է քաղաքակրթութեան ամենաներգործական տարրը. օժտւած լինելով իւրացնելու մի հրաշալի ընդունակութեամբ նա միշտ ծարաւի է եղել և այժմ էլ ծարաւի է նմանւելու այն բոլոր առաջդիմութիւններին, որոնց օրինակը տւել են հեթանոս, մահմեդական թէ քրիստոնեայ մեծ պետութիւնները:

Բայց՝ Արմէններին շատ տարօրինակ է թւում, որ իրանց այդպէս են անւանում: Նրանք պնդում են, որ նախնական ժամանակներից սկսած իրենք հայ (յոգ. հայք) են կոչւել և այժմ էլ հայ են: Ք. յ. IV դարում ենթարկւելով Պարսկաստանին նրանք իրանց երկիրն անւանեցին Հայաստան (ստան = «երկիր»), իրանական վերջաւորութիւն): Նորագոյն պատմաբանները հաւատարիմ մնալով այս աւանդութեան յաճախ Արմէններին անւանում են Հայկաններ (Haïkanes):

Միւս կողմից՝ կարելի է կարծել, որ սկզ-

բում նրանք ուրիշ անուններ ևս ունեցել են. օրինակ՝ Ասկանաս (Ասգանացիներ), երբ դեռ Փոփուզիայում էին, Թօրգոմ՝ որով յետագայում սեմիտական ժողովրդները նրան ճանաչեցին:

Այս անուններից առաջինն ենթադրել է տալիս, որ Արմէնները ցեղակից են եղել Փոփուզիացիներին. և իրօք՝ մենք շուտով ցոյց կը տանք, որ դրանք միևնոյն արմատից են բերւում: Հօմերոսն Ասգանացիներին յիշում է իբրև փոփուզիական մի ցեղ, որ կազմած է եղել հին Բոփուզների ամենահոշակաւոր ընտանիքը համաձայն իրենց սեփական լեզնետանների, ուր Ասկանիաս (Ասկէնաս, Ասկանաս) հերոսը երգւում է իբրև թագաւորական ընտանիքի հայր. Ասկանասն ամբողջ ազգն անւանեց Փոփուզ (φρυγ) *:

Արմէնների այս ծննդաբանութիւնը հիմնաւորւում է նրանով, որ ոչ մի ուրիշ ցեղ չէր կարող Փոփուզացիներից ծագած լինել. մենք չգիտենք թէ ուրիշ ուէ կարևոր ճիշտաւորութիւն առաջ եկել է այս ժողովրդի մէջ թէ ոչ. միւս կողմից՝ Ասկանացիներն երբէք օտար ծագում չեն ունեցել, նրանց անունը հնդկա-երոպական է և Գերմանների մօտ աուկոն (askən) ձևն է ստացել: Ծիշտն ասած աւ (as) վերջաւորութիւնը, որ աւելացել է այս արմատի վրա, յատուկ հայ-

*) Մասպերօ, Հին պատմութիւն Արևելեան Արգերի, III հ. էջ. 328

կական ոչինչ չունի, պէտք է լինէր ազըն (азен), որպէսզի կազմէր Ասկանա-զըն, այսինքն՝ Ասկանի ազգից, ինչպէս Հայկա-զըն, Արամա-զըն, Թօրգօմա-զըն: Բայց՝ կարելի է ընդունել, որ վերջին ունգային հնչիւնը կորսել է նախնական ժողովրդական գործածութեան ժամանակ, և մեր յիշած վերջին օրինակները կազմել են Ք. յ. V դարում, կրթած հայերի ձեռքով:

Սուրբ Գրքի մէջ Թօգօրմա ցեղը համարուում է ազգակից Արմէններին և Ասգանացիներին, որոնց հետ միասին բնակւել է հիւսիսային գաւառներում և յապկապէս անձնատուր է եղել ձիարուծութեան. մինք յետոյ կըտեսնենք, որ իրօք հայերն այդ արւեստի մասնապիտուկիւնն են ունեցել:

Ս. Գիրք գրողները միայն ժողովրդական զրոյցներից տեղեկանալով հայերի—իրենց վերջնական հայրենիքում հաստատւելուց յետոյ—տիրապետած երկրին ամենից մօտիկ ապրող բնակիչների մասին՝ կարող էին ցանկութիւն ունենալ յիշատակել դրանց խօսելով Բանէցիների (Բիսյնա, բռնում է Վանայ լճի հովիտը) և Մանէցիների մասին (Մաննայի, բռնում է Ուրմիոյ լճի հովիտը): Բայց՝ սխալ է սրանից եզրակացնել թէ այս ժողովուրդները հայեր են եղել, որովհետև դրանք հայերից ղեռ շատ ա-

ռաջ ապրում էին այդտեղ և միւս կողմից՝ բուրովին ուրիշ ծագում ունին:

Ս. Գիրքը նոյն կերպ է վարում, երբ միևնոյն թւարկութեան մէջ է դնում Արարատեան երկիրը և Արաքսի հովիտը, որոնք Հայաստանի կենդրոնն են եղել, բայց՝ նա այստեղ ուզում է պարզապէս գաւառներն անւանել:

Կարելի է ընդունել, որ այն սկզբնական արմատը, որի ներկայութիւնը շուտով կտեսնենք Եւրոպայում Արմէն անունով, Ասիայում գանագան շառաւիղներ է ուղարկել յետագայում իւր սեփական տեղափոխութիւնը պատրաստելու համար: Այս Արմէն, Հայք, Թօրգօմ, Ասգանաս ժողովուրդները նորից իրար վրայ հաւաքւելով և վերջնականապէս անջատւելով Փոիւզացիներից՝ իրենց ամբողջութեամբ կարող են կազմած լինել Նախնական հայերը:

Գիտութեան արդի վիճակում երկու հանգամանքներ արգելք են հանդիսանում յուսալութէ կարելի է կատարելապէս առասպելից անջատել այս ժողովրդի ծագումը և որևէ բան իմանալ նրա գոյութեան առաջին տարիների մասին մինչև հռոմայեցիների հետ ունեցած կոիւր, ե՞րբ վերջնականապէս հայր մուտք գործեց պատմութեան մէջ: Այդ հանգամանքներից առաջինն այն է, որ Հայաստանում շատ ուշ է զարգացել գրական մշակութիւնը (culture). ա-

ուաջին գրեածքները և հաւանականօրէն նոյնիսկ այբբէնը, Ք. յ. V դարուց այն կողմը չի անցնում չնայած որ III դարուց սկսած քրիստոնէութիւնը պետական կրօն էր դարձել և դրըդիչ էր մարդկանց մտքերի համար. նոյնպէս էլ քաղաքագիտութեան ոգու առաջին արտայայտութիւններն երևում են Ք. ա. I դարում, որին հետևում է անընդհատ ազգային անկում չնայած որ սօցիալական և մտաւոր էվօլուցիան խիստ նշանաւոր չափերով առաջ էր դիմում. վերջապէս՝ էվօլուցիայի այսպիսի դանդաղութիւն նկատուում է և արեւստների (art) մէջ, որոնցից միայն մէկը՝ ճարտարապետութիւնը սեփական բնոյթ ունի և դա էլ հազիւհազ սկսւում է VII դարուց Ք. յ. ու XIII դարում յանկարծ մթնանում. Երկրորդ հանգամանքն այն է, որ բազմաթիւ կարևոր խնդիրների մասին ժամանակաւոր տգիտութեան ենք դատապարտւած, որովհետև մինչև հիմա հետազօտող, պաշար ձեռք բերած ուսումնասէրները զբաղւած լինելով Եւրոպայում բնակւող ցեղերի պատմութեամբ և արեւելեան մեծ քաղաքակրթութիւնից միմիայն մի քանի դօկումէնտներ պարզաբանելով՝ Հայաստանի վերաբերմամբ բաւականացել են կլասիք գրականութեան—որի մէջ է և հայոց գրականութիւնը—մատակարարած տեղեկութիւններով ու այն յիշատակարանները,

րով, որոնք դեռ այժմ էլ կանգնած են բոլոր ճանապարհորդների առաջ: Անշուշտ դեռ ամբողջ XX դարը հարկաւոր կլինի ասիական հողից—որը ուսումնասիրութեան համար անչափ դժւար է Օսմանեան պետութեան մէջ—դուրս բերելու համար էպիգրաֆիք ծանօթութիւնները, գերեզմանների, աւերակների մէջ թաղւած լուսաբանութիւնները, որոնք մնացած լինելով հէնց իրենցից՝ Հայկաններից կամ իրանց թշնամիներից ու յաղթողներից, կարող են կամաց-կամաց փարատել այն խաւարը, որ պատել է հայերի նախապատմութիւնը:

Այստեղ մենք միայն կարող ենք ամփոփել գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի, ռուս և վերջապէս հայ գիտնականների աշխատութիւնները դասաւորելով դրանց իրենց ցոյց տւած կարևորութեան համաձայն:

II

Հաւատարիվ Մովսէս Խորենացու բերած հին աւանդութիւններին հայկը (Haik) Թօրգօմի որդին էր, Թօրգօմը՝ Թիրասի (Thiras), Թիրասը՝ Գամերի (Camer), Գամերը՝ Յաբէթի (Jabet), Յաբէթը՝ Նոյի (Noe): Այս առասպելական ցեղաբանութիւնը մտնում է այն լէգէնտաների շրջանը, որոնք բոլոր սպիտակ ցեղերն առաջ եկած են համարում Յաբէթ նախահօրից:

Այսպիսով Հայկ Նահապետը, որի գոյութիւնըն անհնարին է ստուգել, դառնում է մի ցեղի նախահայր, որը աւանդութեան համաձայն, ջրհեղեղից յետոյ գալիս բնակւում է Վանայ լճի հարաւ-արեւմտեան մասում, ուր մի գիւղ է շինում և անւանում Հայկաշէն (Հայկից շինւած)։ այս գիւղը գտնւում էր այն գաւառի կեդրոնում, որը յետոյ կոչւեց Հարք (հայրեր, նախնիքներ, հայր բառի յոգնակին)։ Հայկ Նահապետից սերածներն այսպիսով իրենց անւանելիս են եղել Հայ կամ Հայա-զըն կամ Հայկա-զըն (Հայկից ծագած), իսկ իրենց երկիրը՝ Հայք կամ Հայաստան։

Պ. Գուռշմիտ Գերմանիայում, պ. պ. կարէր, Թ. Ռայնախ Փրանսիայում, իսկ Ռուսաստանում էմին և Պատկանեան այլ ևս չեն համաձայնում այդտեղ պատմական մի գրոյց որոնել։ Մովսէս Խորենացին իւր պատմութեան I գրքում— դեռ ենթադրելով, որ այդ գրքի հեղինակն ինքն է— առանց քննադատութեան գրի է առել տեղական լէգէնտներ իւր կողմից զարդարելով պատմական և նոյնիսկ զուտ մտածին յիշողութիւններով։

Թող տարօրինակ չթւայ, որ մենք անօգուտ ենք համարում այստեղ մէջ բերել վերոյիշեալ գիտնականների հերքումները։ Նրանց փաստերը նոյն տեսակին են պատկանում և նոյն ոյժն ու-

նեն ինչ որ հրէական, իսլաւական, յունական և ուրիշ նման առասպելների քննութեան հիմքը կազմող փաստերը։ Աւելի օգտակար է ցոյց տալ ամենաուղղակի, «ներքնաբուղի» (intrinsèque) գիտողութիւնները, այսինք՝ այն գիտողութիւնները, որոնք վերաբերում են հայ հին պատմաբանի գրած բառերի ստուգաբանութեանը։ Եթէ Խորենացին գիտենար իւր լեզուի կերպարանաբանութիւնը (morphologie) այն ժամանակ իւր այդ վարմունքի մէջ շատ անճիշտ և նոյն իսկ ակնյայտ անհնարին բաներ կը տեսնէր։ Բանասիրութեան (philologie) վերջին գիւտերից առաջ հայերով զբաղող նորագոյնները նոյն իսկ սխալանքների մէջ են ընկել։

Նորերը չեն նկատել որ չի կարելի թխել Հայկան անունը հիմնւելով վերջաւորութիւնների նմանողութեան վրայ, պատրւակ բռնելով նորագոյն հայ անունների ան վերջնաւորութիւնը։ Այդ ան վերջաւորութիւնն օժականի բնաւորութիւն ունի և չի կարող նշանակել «հայկից ծագած», ինչպէս այդ նշանակում է Հայկա-զըն բառը։ Հները նոյնչափ սխալել են, երբ հայ բառը Հայկ (haikh, հայք) բառից են ծագեցրել. այն ինչ հակառակն է, այս վերջին բառը պէտք է ծագած լինի առաջինից։ Հայ (hai) բառը հնդկա-եւրոպական ծագում ունի և գալիս է Պէտի (Pəti) արմատից՝ այս արմատը նախնա-

կան ածանցման ժողովրդական սիստեմի մէջ
 դառել է հայ (hai) համաձայն ամբողջ հայ բառա-
 րանի մէջ հաստատուն այն կրկնակի երևոյթի, որ
 պ. (p) տառը հայերէնում փոխուում է հ-ի (h),
 իսկտ. (t)՝ յ-ի. օրինակ՝ հնդկա-եւրոպական Պէ-
 տէր (petér) բառը (յունարէն և լատիներէն
 pater) դարձել է հայր (hair): Հայերը ժամանա-
 կի ընթացքում պարսկական և սանսկրիտ Պետ
 (pet, տէր) ձևից է, որ փոխ են առնում այդ վեր-
 շաւորութիւնը, այնպէս ինչպէս ֆրանսերէնի մէջ
 pati արմատն է մտել յունական բառերի
 նմանողութեամբ: Հայերը հէնց այդ ժամանակ-
 ւանից էլ պահել են պետ (pet) ուղղագրու-
 թիւնը որոշ բառերի մէջ, օր. հայրապետ, զօրա-
 պետ: Եթէ հայերն իրենց Տէր տիտղոս են
 տւել, այդ կարող է լինել այն ժամանակ,
 երբ Ք. ա. VI դարում նրանք եկան գրաւեցին
 Ուրարտուն (urarti, Արարատի տիրապետութեան
 տակ գտնւած լեռներից դէպի հիւսիս), ուր
 ապրում էին թաւրերը կամ Ալարօցիները, ո-
 րոնց վրա տէր դարձան իբրև յաղթողներ: (Մենք
 յետոյ կխօսենք այս ցեղի մասին): Համարեա
 հնդկա-եւրոպական բոլոր ժողովուրդները սովո-
 րութիւն են ունեցել այսպիսի պատւաւոր մի
 տիրապետութիւն վերագրելու իրենց զանազանւե-
 լու համար այն տեղացիներից, որոնց մօտ գալիս
 բնակուում էին. հնդկա-եւրոպացիները գալով Հնդ-

կաստան իրենց անւանեցին Արիներ (Arja), այ-
 սինքն՝ հաստատուն, հաւատարիմ, իմաստուն,
 իսկ տեղացիներին՝ «ստրուկներ» (dasa կամ
 dasi):

Հայկ բառին մեր տւած նշանակութեան
 առաջ մի դժւարութիւն է ծագում, որը առա-
 ջին հայեացքից շատ մեծ է թւում: Հայկ բա-
 ուր նախնիք նշանակելու փոխարէն կարող է
 աւելի շուտ երկիր նշանակել: Պ. Եանցըն այս
 ենթադրութեան մէջ գտնում է հայր բառի յե-
 տագայ տիրապետութեան աղբիւրը: Նա կար-
 ծում է, որ հայք (haikh) բառը յատկացւած է
 եղել երկիր նշանակելուն առանց փոփոխութիւն-
 ների, բացի վերջում մի թեթև հնչիւն աւելա-
 նալուց. հայ (hai) բառն էլ, նրա կարծիքով, ծա-
 գում է Հադիօ (hatio) (պ. Եանցընի ուղղագրու-
 թեամբ չգիտենք թէ ինչպէս պէտք է կարդալ
 այս բառը hatio, hajio թէ hatijo) բառից, որը
 մենք ձևափոխել, վերածել ինք Հիտիտ (Hittites)
 ձևին. իսկ այս վերջինը յունական Կատաօնիա
 (Cataonie) նահանգի անւան հին աղաւաղումն է.
 այդ նահանգը յիշում է Հօմերոսը իւր Ողիսա-
 կանում Κήταιοι: ձևով: Պ. Եանցըն Տաւրոսի ու
 Եփրատի մէջ գտնւած Հատի (hati) երկրում
 բնակող Հիտիտներին արդէն հայկական մի
 ցեղ է համարում. և իբր թէ այս Հետիտներից

են ծագել Արմէնները, որոնք իրենց նախահայրերին քշելով իւրացրել են նրանց անունը:

Պ. Եանցըն, որի ամբողջովին անհատական կարծիքը մէջ բերինք, ձգտում է բացատրել Փոքր-Ասիայում և այդտեղից մինչև հարաւային Ասորիք հասնող տարածութեան վրայ գտնւած արձանագրութիւնները, այդ պատճառով էլ հայերէն լեզուով է կարդում այդ արձանագրութիւնները և գտնում այդտեղ պատմութիւնն այն կռիւների և դաշնագրութիւնների, որոնք տեղի են ունեցել այդ արձանագրութիւնների հեղինակ ազգի և ուրիշ ցեղերի մէջ. յունական պատմիչները այս վերջինների մասին, ինչպէս Նինվէացիներն ու Եգիտացիներն են, տեղեկութիւններ են տալիս թէ ինչ յարաբերութեան մէջ են եղել Հիտիտների հետ:

Այս հեղինակը հայերի պատմութիւնը համարում է Հիտիտների պատմութեան շարունակութիւնը. հետիտներին նոյնպէս հայկական ծագում է տալիս, բայց՝ Ասիայում առաջ սրանց է հաստատում և յետագայում նոր Արմէններին բռնի է տալիս դրանց տեղը Կապադովկիայում: Այս իբր թէ նախահայկական ցեղի վրայ նա նայում է իբրև մի բաղաբաղրթւած ցեղի, որը հնդկա-եւրոպական բոլոր ցեղերից առաջ կարողացել է գրի գործածութիւն ունենալ (այս բանը ճիշտ է գոնէ Ասիայի վերաբերմամբ):

Միւս բանասէրները չեն ընդունել այս տարօրինակ կարծիքը. նրանք համաձայն ընդունում են, որ չնայած Հիտիտների ծագումն անյայտ է, բայց նրանք հնդկա-եւրոպական ճիւղին չեն պատկանում ինչպէս Արմէնները: Այն ցուցմունքները, որոնց վրայ հիմնուած է այս ընդհանուր համաձայնութիւնը ամփոփւած է պ. Օ. Շրագըրի, այս խնդրում համարեա բոլորից հեղինակաւոր մարդու գրածքներում. «Բալկանեան թերակղզու հիւսիսային կողմում և Եգէեան ծովի կղզիների վրայ ենթադրւում է, որ նախապատմական ժամանակներում ապրելիս են եղել ալլոֆիլ (allophyle-ը հնդկա-եւրոպական ճիւղին չի պատկանում) ընտանիքին պատկանող ժողովրդներ, որոնք Փոիւզացիներից և Արմէններից առաջ գրաւել էին ամբողջ Փոքր-Ասիան (և հեղինակը Հիտիտներին հաշուում է ալլոֆիլների ընտանիքին պատկանող ժողովրդների թրւում): Այս ժողովրդների հնդկա-եւրոպական բնոյթ չունենալն երևում է մասամբ իրենց հին աւանդութիւնից, մասամբ իրենց լեզւի որոշ բառերից, յատկապէս անձ և տեղ ցոյց տւող բառերի ձևերից, որոնք ոչ մի առնչութիւն չունին հնդկա-եւրոպական լեզուների հետ և վերջապէս՝ մասամբ որոշ սովորոյթներից և բարքերից, որոնք հաւանականօրէն հէնց սկզբից տարածւած են եղել իրենց երկրում, ինչպէս օրինակ՝ մօր իրա-

ւունքը, ծննդաբերութեան բեռը իւր վրայ կը-
րելու համար հօր գործ դրած կեղծ, ծննդկանի
տանջանքներին նմանուող տանջանքների սովո-
րոյթը, որոնք հնդկա-եւրոպական բնոյթ չու-
նեն»:

Միւս կողմից՝ դժւար է երևակայել թէ ինչ-
պէս պ. Եանցըն կարողացել է հիտիտական գը-
րութիւնը հայերէն կարգալ: Այդ գրութիւնը
պատկերազրական է (hiéroglyphe), դեռ հա-
զիւ սկսել են կարգալ և գրանից երբէք չի երևում
հնդկա-եւրոպական ծագումը: Այդ գաղափա-
րագրերի (idéogramme) և եգիպտական պատկե-
րագրերի մէջ ունէ նմանութիւն գտնելուց այլ
ևս հրաժարուում են և առանձին տրամադրու-
թեամբ համեմատում են խալդէականի հետ, ո-
րոնք կիպրական այբբէնի համար բազմա-
թիւ տարրեր են մատակարարել և այդպիսով կազ-
մել է հնչական գրութեան առաջին ուրա-
զիծը, որը յետագայում փիւնիկեցիներից և ա-
պա յոյներից կատարելագործուում է: Հիտիտա-
կան արձանագրութիւնները բացազրոյ ուրիշ
սիստեմներ ևս կան, որոնցից ոչ մէկը հայկական
ընտանիքի հետ ունէ նմանութիւն ցոյց չի տա-
լիս: Հայերի և Հիտիտների մէջ մի այդպիսի
նմանութիւն գտնելու համար անհրաժեշտ էր
ցոյց տալ, որ նախնական հայերէնի հնդկա-եւ-
րոպական արմատներից որոշ չափով գտնուում են

հիտիտական լեզւի մէջ այն էլ իրենց հիմնական
գծերով. որովհետև եթէ միայն ածանցների նմա-
նութիւնը լինի, այդ դեռ ոչինչ չի նշանակում,
կարող են փոխ առած լինել: Սակայն՝ մի
այսպիսի ապացոյց առաջ բերելը չափա-
զանց դժւար է. դեռ պէտք է սպասել մին-
չև որ այդ սիմվոլիքական գաղափարագրերից
դուրս կրբերեն կենդանի լեզւի մէջ գործածուող
համապատասխան բառերը, այն ինչ դեռ մինչև
հիմա չի յաջողւել գործողութիւններ և առար
կաներ ներկայացնող պատկերները վերածել
առանձին-առանձին, որոշ հնչիւնների: Պ. Են-
զէն այլ կերպ պէտք է վարւէր. նախնական
օրինակին դեռ շատ մօտիկ այդ պատկերների
տակ թագնւած մտքերը բացատրելու համար նա
պէտք է համեմատութեան մէջ դնէր դրանց
խալդէական գաղափարագրերի հետ, որոնք միւս
իպիգրաֆիստների կարծիքով աւելի նման են
և ոչ թէ եգիպտական պատկերագրութեան հետ,
որոնք այբբէնի էվոլիցիայի մէջ յայտնի են
իբրև աւելի յետագայ ժամանակի գործ. պ.
Ենզէն հնարել է մի խելօք, բայց՝ իսկապէս
ենթադրական թարգմանութիւն ու այնուհետև
նկատել է, որ այդ թարգմանութեան մէջ պատ-
մութիւնից, կրօնից, բարբերից՝ դէպքեր, գաղա-
փարներ են յիշուում, որոնք Հիտիտներին յա-
տուկ լինելով հանդերձ յիշեցնում են նաև նախ-

1004
16820

նական հայերի պատմութեան որոշ զէպքերը—ի հարկէ այն չափով ինչ չափով որ մենք կարող ենք երևակայել—և մօտենում են մեզ ծանօթ հայկական սովորութիւններին ու հաւատալիքներին: Պէտք է խոստովանել սակայն, որ ինչքան էլ ճկուն լինի ինտուկցիայի այս կառուցւածքը, դարձեալ անկարող է մեզ համոզել:

Ուրեմն՝ մենք պէտք է ժամանակաւորապէս ընդունենք, որ Հիտիտները Հնդկա-Եւրոպացիներ չեն և հետևաբար Արմէնները նրանց համար բոլորովին օտար են եղել, որովհետև վերջիններս պատկանում են հնդկա-Եւրոպական մեծ ընտանիքին. այս բանն ապացուցանող վճռական փաստերը օգտակար ենք համարում ամփոփել այստեղ քանի որ դրանք նոր են և քիչ ծանօթ:

Այս հետազօտութեան ժամանակ հնարաւորութիւն չկար յատուկ ուշադրութիւն դարձնելու հայկական աւանդութիւնների վրայ, որովհետև բոլոր հայ հեղինակները Ք. յ. III դարուց ուշ են հանդէս եկել և բաւականացել են տեղական, դեռ կենդանի աւանդութիւնները գրի առնելով. ուստի պարզ է թէ այդքան դարերի ընթացքում բերնէ-բերան անցնելով այդ լէգէնտաները սրբան փոփոխած կլինեն ճշմարտութիւնը: Մակայն ինչ էլ որ լինի ծագումը այն անւան, որ հայերը իրենց տալիս են՝ բոլոր այս ենթա

դրութիւններից երևում է, որ դա առաջ եկած պէտք է լինի իրենց նախնական հայրենիքից գաղթելուց յետոյ. ուրեմն՝ աւելի լաւ է ընդունել Արմէն անունը, որ տալիս են նրանց թէ յոյները, թէ եւրոպական աւանդութիւնը և թէ ամենանոր քննադատները: Այս կոչումն աւելի յարմար է այդ ժողովրդի համար, որը անտեղեակ է, ոչինչ չըզիտէ իւր ծագման մասին:

Յոյներից Հերոդոտն առաջինն է, որ խօսում է այս խնդրի մասին. նրա ասելով Արմէնների արմատը փոխաբերական է. «Փոխաբերակները, ասում է նա, Քսերքսէսի հետ դաշն էին կապել. նրանք Պաֆլագոնիացիների նման սպառազինութիւն ունէին: Մակեդոնական մի աւանդութիւն հաստատում է, որ Փոխաբերակներն առաջ գտնւում էին Եւրոպայում, Մակեդոնիայի մօտերքում. այդ ժամանականից նրանք իրենց անւանում էին Բրիկ (Brig): Արմէնները, որոնք սերւում են Փոխաբերակներից, նրանց նման էին զինւած: Թէ մէկի և թէ միւսի ընդհանուր հրամանատարը Դարէհի փեսայ Արաօխմէսն էր» *): Միևնոյն հեղինակը մի ուրիշ տեղ աւելի է պարզաբանում. Բրիկ կոչւած ժողովուրդը «Մակեդոնացիների հետ միասին բնակւելիս այս անունն էր կրում իսկ երբ Ասիա անցաւ ձեռք չափողի, — իրեն անւանեց Փոխաբերակ: Գալով

*) Հերոդոտ, Պատմութիւն. I. VII, 73.



Արմէնների մասին, նրանք գալիս էին միեւնոյն
երկրից ինչ որ Փոհւգիացիները Ἀρμένιοι δὲ...
ἐόντες Φρυγῶν ἀποικοι, Արմէնները հետևեցին Փոհւ-
գացիներին»:

Եւբոքս նոյնպէս պնդում է, որ Արմէննե-
րը փոհւգիական ցեղից են, Ἀρμένιοι τὸ γένος ἐκ
Φρυγίας. և բազմաթիւ «փոհւգարանութիւններ»
է նկատում հայոց լեզւի մէջ, καὶ τῆ φωνῆ πολλὰ
φρυγίζουσιν:

Իենիս Հալիկարնացին նոյնպէս ասում է, որ
հայոց լեզուն նման է Փոհւգացիների լեզւին,
ὁμόγλωσσοι:

Ստրապոն հաստատում է Հերոդոտի վկա-
յութիւնը և աւելի է առաջ գնում: Նա Արմէն-
ներին ուղղակի Թէսալիայից է բերել տալիս:
«Արմէնը, ասում է նա, ծնւած Արմէնիօնում—
Թէսալիայի քաղաքում, որը գտնւում է Լարիսի
և Պերէի մէջ, Բէօբէ լճի վրա—Եագօնի հետ-
միասին նաւեց դէպի այն երկիրը, որ յե-
տոյ Արմէնիա կոչւեց իւր անունով... Ասում են
թէ Արմէնների շորերը նոյնպէս թէսալական են,
օրինակ՝ նրանց մեծ շապիկը, որ իջնում է մինչև
ծնկները. այդ շապիկը թէսալական ողբերգու-
թիւնների մէջն է հանդէս գալիս... Հայերը մի ա-
ռանձին ձգտում ունին դէպի ձի նստելու արևստը,
որը պէտք է թէսալացիներից ստացած լինեն-
նոյն բանը նկատւում է և Մեոացիների մէջ»: Նա

աւելացնում է, որ Արմէնը կուր գետի մեծ ճիւղին
Արաքս անունը տւեց, որովհետև թւում է
թէ լեռներից է գահավիժւում (ἀπαράξαι). և այս
անում է ի յիշատակ Պէնէին, որից հեռացել էր
և որը նոյնպէս էր հոսում Իէմպէ ձորում, Ոլիմ-
պոսի և Օսսայի մէջ:

Ծերունի Ստրապոն, որը երբ ցանկանում է
շատ ճշգրիտ է լինում իւր գրութեան մէջ, գուցէ
ժպտում էր այս սողերը գրելիս: Հաւատում
էր նա Արգօնաւորդների լեգէնտային: Չգիտէր
արդեօք այն աւանդութիւնը, որը Արմէններին և
Փոհւգիացիներին ազգակից է համարում և դարեր
շարունակ թափառեցնում Փոքր-Ասիայի գա-
նազան կողմերում մինչև Արաքսի հովտին հաս-
նելը: Արդեօք իսկապէս որոշ կարևորութիւն
տալիս էր հագուստների և բանքի այդ չնչին
նմանութեան: Սակայն՝ յայտնի է թէ որքան
զգուշ պէտք է լինել հին պատմաբանների վե-
րաբերմամբ, երբ նրանք անձնատուր են լինում
իրենց առասպելական աշխարհի յիշողութիւննե-
րին. օրինակ՝ ծանրախոհ Տակիտոս կովկասի Վրա-
ցիներին և Աղւաններին նոյնպէս սերել է տալիս
Եագօնից, որը Կալսիդում Մէդէից բազմաթիւ
որդիներ ունեցաւ: Արդ՝ չնայած որ այս եր-
կու ժողովրդների ծագումը դեռ անձանօթ է,
սակայն՝ մարդաբանութիւնն ու բանասիրու-
թիւնն եկել են այն եզրակացութեան, որ դը-

րանք հնդկա-եւրոպական ճիւղին չեն պատկանում: Սխալ է սրանից եզրակացնել թէ, որովհետեւ այս երկու ժողովուրդները հնդկա-եւրոպացիներ չեն, ուրեմն հայերն էլ չեն կարող լինել: Ստրապոն պարզապէս սխալուում է, երբ լէգէնտան յարմարեցնում է ուրիշ հեղինակների տւած աւելի ճշմարիտ դիտողութիւններին: Իսկապէս ասած սրանք բոլորն էլ արձանագրուած են ժողովրդական մի աւանդութիւն, որը պէտք է որոշ հիմք ունենայ:

Յունական այս վկայութիւնների ամբողջութիւնը մեզ երկու հարցերի առաջ է կանգնեցնում, որոնք աւելի կարևոր են քան թէ Արմէն և Հայկազըն անունների ընտրութիւնը:

Ամէնից առաջ այն աւանդութիւնը, որ հայերին անմիջապէս կամ Փոխգիացիների միջնորդութեամբ բերել է տալիս Թէսալիայից կարող է կասկած յարուցանել հայերի հնդկա-եւրոպական ընտանիքին պատկանելու մասին, որի նախնական բնակավայրը—ինչպէս արդի բոլոր գիտնականներն են կարծում—եղել է Սև ծովի հիւսիս-արևմտեան կողմում: Այս հարցի շահաւէտութիւնը հասկանալու համար պէտք է նկատի ունենալ թէ ինչպէս մինչև վերջին տարիները չգիտէին որտեղ դասաւորել հայերին և այդ առթիւ ամենաֆանտաստիք ենթադրութիւններ եղան ու պատճառ դառան բացար-

ձակապէս սխալ գաղափարների տարածման: Երկրորդ՝ եթէ հայերը հնդկա-եւրոպական ծագում ունին ուրեմն՝ թողնելով թէ իրենց և թէ իրենց եղբայրներին ծնունդ տւող նախնական ժողովրդի բնակավայրը ուղղակի Եւրոպայից են եկել և ո՞ր ճանապարհով, կամ թէ արդէն ուրիշ տեղ հաստատուած այս ժողովրդի մի ուրիշ ճիւղից չեն՝ անջատուել: Մենք տեսանք, որ Ստրապոն ընդունում է առաջին ենթադրութիւնը, իսկ Հերոդոտն ու Եւդոքսը՝ երկրորդը: Արդի գիտութեան առաջին քայլը նոյնպէս հայերին սերւած էր համարում հնդկա-եւրոպական ընտանիքի երկրորդական մի ճիւղից՝ կապելով նրանց արևելեան Իրանցիների կամ արևմտեան Փոխգիացիների հետ:

Մենք կարծում ենք, որ հէնց հիմակւանից շատ պարզ և որոշ կերպով կարելի է հաստատել թէ հայերը պատկանում են հնդկա-եւրոպական ընտանիքին և ուղղակի Մակեդոնիայից Փոքր-Ասիա են եկել առանց ունէ ցեղական միջավայրից անցելու. և այս հանգամանքն ապացուցանող փաստերը օգտակար ենք համարում ամփոփել այստեղ:

III

Մարդաբանութիւնը մինչև հիմա վճռական դեռ ոչինչ չի տւել այն ընտանիքի մասին,

որին պատկանում են հայերը: Երկու գիտնականներ միայն համարձակութիւն են ունեցել մի եկեղեցիութիւն անելու. պ. Վիրիսովը կարծում է, որ Բողագ-Քէօյում գտնւած հին Փռիւզացիների գանգերի և նորագոյն հայերի գանգերի մէջ մեծ նմանութիւն կայ: Սակայն՝ չբացատրելով թէ մինչև ո՞ր աստիճան կարելի է վրաստան լինել, որ Բողագ-Քէօյում գտնւած մարդկային բեկորները Փռիւզացիներին են պատկանում: Այս քաղաքի աւերակները, ինչպէս տեսանք, միայն Հիտիտներին կարելի է վերագրել կամ ամենաշատը Մատիէններին (Matiyènes). սակայն՝ ոչ մէկը և ոչ միւսը Փռիւզացիների հետ ոչ մի առնչութիւն չունին. պատմութիւնն էլ, որքան գիտենք, ոչ մի հետք չի պահպանել, որով կարելի լինէր ցոյց տալ որ Փռիւզացիներն ապրել են այդ տեղում: Պ. Կրէյմէր արդէն իբրև ապացուցւած ընդունելով այս հանգամանքը՝ եզրակացնում է, որ Փռիւզացիները և Արմէնները ցեղակից են:

Լեզւաբանութիւնը՝ առանց արհամարհելու միւս գիտութիւնները և յատկապէս մարդաբանութիւնը, իւր սեփական միջոցներով գտել է, որ միայն նախնական հայերը—և ոչ թէ պատմութեան բոլոր հայերը, որոնք չափազանց խառնակած են, ինչպէս յետոյ կտեսնենք—պատկանում են հնդկա-եւրոպական ընտանիքին: Այս

աշխատանքի համար լեզւաբանութեան սեփական փաստերն այն աստիճան ծանրակշիռ, բաւարար են եղել, որ համարեա թէ բոլոր հայագէտներն այլևս ոչ մի կասկած չեն յայտնում այս խնդրի առթիւ: Եւ քանի որ այս խնդրի ապացոյցները նոր են և ցրիւ եկած բազմաթիւ գրեածքներում, ուստի՝ օգտակար է այստեղ ամփոփել գլխաւոր տարրերը: Դրանք հիմնւում են էական, գլխաւոր բառերի արմատների նմանութեան վրայ:

Մենք Հնդկա-եւրոպական ենք անւանում այն նախնական ժողովրդին, որին Գերմանացիները Հնդկա-Գերմանական անունն են տալիս կատարելով դասաւորութեան մի տարօրինակ սխալ, որովհետև այդտեղ խառնւում է մի սեռ և մի տեսակ: Աւելի անտրամաբան է Անգլիացիների վարմունքը, որով Արիական են կոչում Ռուսաստանի հիւսիսային կողմում ապրող այս ժողովրդին, այնինչ Հինդուները Արիական անուն կրեցին Հիմալայեան լեռներն անցնելու յետոյ:

Բայց՝ անունը այնքան էլ նշանակութիւն չունի: Եւրոպայի հնդկա-եւրոպացիները՝ Կելտերը, Գերմանները, Լատինները, Յոյները և Ասիայի հնդկա-եւրոպացիները՝ Հինդուները, Իրանցիները, Փռիւզացիները և Արմէնները, այս ութ խմբերը երբ դեռ չէին կազմակերպւել և ցրել՝ լեզւաբանական երկու ձգտումներ էր նկատւում այն միակ ժողովրդի ծոցում, որը այս

խմբերին ծնունդ է աւել: Դա արտասանութեան երկու ճիւղաւորութիւնն է, որը պէտք է պարզապէս ամփոփւած լինէր բնակչութեան աջ ու ձախ կողմերում և նոյն իսկ պէտք է համապատասխանէր սօցիալական և ազգագրական շերտաւորման սկսւելուն. որովհետև այս ութ խմբերը, հազւագիւտ բացառութեամբ, իրարից բաժանւելուց յետոյ նորից համախմբուում են, միանում Ասիայի կամ Եւրոպայի միեւնոյն շրջաններում. այս երկու շրջաններում խմբւած ցեղերը պահպանել են լեզուի այն էական տարբերութիւնները, այն ճիւղաւորութիւնը, որը ուրւագծւել էր դեռ իրարից բոլորովին չբաժանւած: Այս հնչիւնական ճիւղաւորութեան գլխաւոր առանձնայատկութիւնը նրանումն է, որ քմքային Կ (K) կամ փափուկ, փուլ եկած Ք (Q) հնչիւնն երկու ձևափոխութեան է ենթարկւել. նախնական, մայր ժողովրդի արևմտեան կէսը թեթև կերպով ձևափոխել է այդ հնչիւնը, դարձրել աւելի «կակուղ», հնչիւնական տեսակէտից աւելի «զարգացած», առաջ ցնացած. իսկ արևելեան մասում այդ հնչիւնն իւր բնական դարգացման գազաթնակէտին է հասել և այնուհետև դառել է մի սուրող ձայն, անշուշտ արտասանւած լեզուի մէջքով և ոչ թէ ծայրով ինչպէս Քրանսական S տառն է: «Կակուղ» Կ (K) նշանակենք C տառով, իսկ «թանձր» Զ.ն՝ S տառով. այս կրկ-

նակի փոփոխութիւնը եթէ գործադրեն օր. 100 թիւը արտայայտող բառի վրայ՝ կտեսնենք, որ նախնական ժողովրդի արևմտեան մասը արտասանել է Cēntum (Սենտում). իսկ արևելեան մասը՝ Satām (Ջատամ): Այս տարբերութիւնը նկատուում է ցրիւ եկած ութը խմբերի երկու մեծ բաժանմունքի մէջ. Cēntum արտասանող մեծ բաժանմունքը կազմում են Եւրոպայում և մինչև Ռուսաստանի կետրօն խմբւած ցեղերը, այսինքն՝ Յոյները, Իտալացիները, Կելտերը և Գերմանները. Satām մեծ բաժանմունքը կազմում են Արևելեան Ռուսաստանից մինչև Ասիայի հարաւային կողմ բնակւածները, այսինքն՝ Փոփուկացիները, Արմէնները (հայերը), Իրանցիները, Հինգունները, որոնց վրայ պէտք է աւելացնել Թրակացիներին ու Իլլուրօ-Աղւանցիներին, որոնք միայն այժմ խառնւել են առաջին խմբի հետ:

Այս ութը լեզւաբանական կատեգորիաների հիմնական նմանութեան գիւտը, որից հանում են այն ճիշտ, արդէն բաւականաչափ փաստերով ապացուցւած եզրակացութիւնը, թէ այդ ութ խմբերը սկզբնական, նախնական շրջանում միացած, մի լեզու են կազմել և հետևաբար մի ժողովուրդ, — բանասիրութեան ամենամեծ յազթանակներից մէկն է: Միւս կողմից՝ պատմութիւնը, աշխարհագրութիւնն ու մարդաբանու-

թիւնը հաստատում են այս հետևութիւնը: Բո-
լոր հնդկա-եւրոպացիների մայր ցեղը ճիւղա-
ւորւելուց, բաժանւելուց առաջ բնակւում էր
ոչ թէ Իրանի բարձրավանդակի վրայ, ինչպէս
դեռ մի քանի տարի առաջ հաւատում էին,
այլ՝ Ինիէրբի և Վօլկայի հովիտներում՝ տա-
րածւելով Սև ծովի ափերի երկարութեամբ մին-
չև Կարպատեան լեռների մօտերքը: Այստեղից
է, որ Հինդուները և Իրանցիները գաղթում են
Ասիա՝ Կովկասի Թուրքեստանի վրայով, յետոյ
գաղթում են Փոխլգիացիները՝ Եգէեան ծովի կամ
Բօսֆօրի վրայով. այս մասին այժմ ոչ ոք չի
կասկածում. բայց՝ մեզ հարկաւոր է ցոյց տալ,
որ հայերն ևս անցել են միևնոյն ճանապարհով
ինչ որ Փոխլգիացիները առանց սրանցից սերւած
լինելու:

Այստեղ նոյնպէս լեզու ուսումնասիրութեան
շնորհիւ է, որ կարելի է եղել իմանալ, թէ «Սև
Հողերը» — որոնք հռչակաւոր են իրենց պողաբե-
րութեամբ և որոնց վրայ գտնւում է այժմ
հարաւային Ռուսաստանն ու Բեսարաբիան — ե-
ղել են այն կետրոնը, որից առաջ են եկել գաղ-
թականութեան այս զանազան ճիւղերը: Եւ իսկա-
պէս՝ վերոյիշեալ ութը ընտանիքների ընդհանուր
մայրը՝ մարդկանց նախնական խումբը իւր բար-
բառի մէջ չունի մի կենդանու անուն, որին կեն-
դանաբանութիւնը համարէր Ասիայում առաջա-

ցած, այն ինչ եթէ Իրանի մօտերքը բնակւած լի-
նէր մայր խումբը անշուշտ կունենար այնտեղին
յատուկ կենդանիների անուններից: Այս ութը
խմբերի լեզուների ուսումնասիրութիւնը ցոյց
է տւել, որ դրանք իրենց երկրներում ապրող
կենդանիներին տարբեր-տարբեր անուններ են
տւել, եթէ միայն այդ կենդանիներն սկզբնա-
պէս տարածւած չեն եղել Սև ծովի հիւսիսային
կողմում. բացի այդ՝ այս խմբերից եօթը ոչ
մի բառ չունի Ասիայում ծագում ստացած կեն-
դանիների՝ իշու և ուղտի համար: Իսկ այն
հանգամանքը, որ այս ութը բարբառներն էլ
վազրի և առիւծի համար ընդհանուր, նման
բառեր չունեն՝ ոչինչ չի ապացուցանում, որով-
հետև կարելի է ենթադրել, որ նախնական,
մայր խումբն այս կենդանիների համար բառեր
ունեցել է և երբ այդ կենդանիներն աներևոյ-
թացել են իւր հողից նրանց անուններն էլ մո-
ռացութեան է մատնել. միևս կողմից՝ ոչ մի ա-
պացոյց չկայ թէ այդ ժամանակ Ռուսաստանում
առիւծ և վազր չեն եղել ինչպէս չեն եղել ի-
րօք էջն ու ուղտը: Սկզբում կարծում էին, որ
Ռուսաստանում արջ չէ եղել, իսկ մայր լեզուի
մէջ յիշուում է այդ կենդանու անունը. շուտով
այդ սխալն էլ փարատւում է:

Բանասիրութեան միևնոյն միջոցներով գը-
տել են, որ մայր ցեղը տարւայ երկու եղանակ-



ների մասին միայն գաղափար ունէր—ամառը
և ձմեռը, որոնք միմիանցից բաժանուում են ե-
ղանակի խիստ տարբերութեամբ չհաշուելով մի-
ջանկեալ եղանակները: Այս ութը ժողովուրդ-
ների քոյր լեզուներն ամառը և ձմեռը ցոյց
տալու համար նման բառեր ունին, այնինչ ա-
սիական ծագում ունեցող ազգերն այս եղանակ-
ները ցոյց տւող միևնոյն բառերը չունեն: Հնդ-
կա-եւրոպական ծագում ունեցող ութը ցեղերը
զանազան կողմեր ցրելուց յետոյ միայն՝ սկսեցին
բառեր ստեղծել որոշելու համար գարունն ու ա-
շունը համաձայն իրենց բնակավայրերի. և այս
նոր բառերը, որ մի ցեղ ստեղծում է միւսի
ստեղծածների հետ ոչ մի առնչութիւն չունեն:
Ուրեմն՝ Հնդկա-Եւրոպացիները ծագմամբ Իրանի
բարձրավանդակից չեն, ուր այս միջանկեալ ե-
ղանակները՝ գարունն ու աշունը խիստ կերպով
զանազանուում են: Որ Հնդկա-Եւրոպացիները
լեռ, ծով ցոյց տւող նման, ընդհանուր բառեր
ունեն՝ դրանից ոչ մի բան չի կարելի եզ-
րակացնել, որովհետև ամէն տեղ էլ, թէ Ա-
սիայում և թէ Եւրոպայում, լեռներ կան, ծովեր
կան: Բայց՝ նոյն բանը չի կարելի ասել գետ
ցոյց տւող գաղափարների համար. գետերի վերա-
բերմամբ նախնական, մայր ցեղի ծանօթութիւն-
ներն այնքան շատ են, որ պէտք է ենթադրել
թէ նրանք ապրել են մեծ դաշտեր ունեցող,

լաւ ոռոգւած մի երկրում և ոչ թէ Իրանի
բարձրավանդակի նման մի տեղում, ուր լեռնե-
րը շատ քիչ նպաստաւոր են երկրի ոռոգման
համար. և եթէ այդ լեռները լինէին այն սկզ-
բնական վայրը, որտեղից ութ խմբերը ճիւղա-
ւորեցին՝ այն ժամանակ նրանք բոլորն էլ միևնոյն
կերպով չէին արտայայտի գետերի մասին իրենց
ունեցած գաղափարները: Ոչ նւազ համոզեցու-
ցիչ և ակնյայտ է ծաղիկներ և կենդանիներ
ցոյց տւող բառերի նմանութիւնը: Սրանք ծա-
ռերի երեք անուններ ունեն, որոնց արմատնե-
րը նոյնն են—ցարասի (bouleau), ուռենի (saule),
և կաղամախի (peuplier). այնինչ երբ յետագա-
յում այս մեծ ընտանիքի անդամները տարած-
ւեցին կարպատ լեռների վրայ և Դանուբի գի-
տաբերանի շուրջը (Եւրոպացիների ճիւղը)՝ ճա-
նաչեցին շատ ուրիշ ծառեր, որոնց տւին
զանազան անուններ. իսկ այդ անունները
տարբեր են այն անուններից, որոնք Իրան գաղ-
թող անդամներն են տւել միևնոյն բոյսերին:

Սրանից հետևում է, որ մայր ցեղը չէր
ապրում լեռների վրայ, այլ՝ դաշտային մի երկ-
րում. բացի այդ՝ բաձր հարթութիւնների վրայ
ծագում ստացած ժողովուրդը չէր կարող իրա-
նից սիրւած յետնորդների լեզուներին արմատ-
ներ տալ, որից ածանցւած նման բառեր կազ-
մէին այն կենդանիների համար, որոնց չէին

ճանաչում, կամ կենդանիների այն արտադրութիւնների համար, որոնց գործ չէին անում: Այս բանը կարելի է ցոյց տալ մեղրի և խմիչքե վրայ, որոնց հնդկա-եւրոպական մայր-ցեղը գործ էր անում: Այս խմիչքը—«մետ»-ը, ինչպէս նաև մեղրը, սկզբում անձանօթ էր թէ Օքսուսի և Եաքսարդի հովիտներում և թէ Ուրալի արևելեան կողմում, որովհետև պ. Թ. Կէօպպէն ցոյց է տւել, որ այդ երկիրները չեն մտնում այն շրջանակը, ուր սկզբնապէս տարածւել են մեղուները: Հնդկա-եւրոպական ութը լեզուների մէջ քառասուն ու հինգ ուրիշ կենդանիների անուններ են հաշւում, որոնք ընդհանուր են. բայց՝ քանի որ դրանց սկզբնական հայրենիքը դեռ չի սահմանազօծւած, ուստի ոչինչ չի կարելի հետևեցնել: Լեզւաբանական այս գանձան ղիտոգութիւնները վերաբերում են նաև հայոց լեզւին, որից պէտք է եզրակացնել, որ հայերը ունեցել են հնդկա-եւրոպական ժողովրդի ճիւղաւորութիւններին յատուկ որոշ բաներ. այդ բաները նրանք պահպանել են դեռ միւս ցեղերի հետ նորից միանալուց առաջ և չեն վերցրել ոչ այս ութը ճիւղերից և ոչ էլ տարբեր ժողովուրդներից:

Մարդաբանութիւնը ցոյց է տւել, որ ոչ մի «ցեղ», բառիս բուն մտքով վերցրած, գոյութիւն չունի, որի բնորոշ գծերը նման լինէին հնդկա-

եւրոպական ցեղերին: Սրանից շտապել են եզրակացնել թէ այս հնդկա-եւրոպական ժողովուրդները միևնոյն ծագումը չունին: Բայց՝ անաչառ գիտնականները՝ ինչպէս պ. պ. Օ. Շրադէր և Ֆ. Ռատցէլը բացարձակապէս ոչինչ են համարում այդ ապացոյցը, այդ փաստը. որովհետև ցեղի մասին եղած հարցերը վերաբերում են մի այնպիսի դարաշրջանի, որը չափազանց հեռու է այն ժամանակահատից երբ հնդկա-եւրոպացիների մայր ժողովուրդն է ապրելիս եղել: Առաջներում շատ իսկական ցեղեր են միմիանց հետ խառնուել ամէն կողմերով. հնդկա-եւրոպական ժողովուրդը մի խառնորդ է, որը իւր համար առանձին մի լեզու է մշակել՝ անշուշտ իւր նստակեաց աշխատանքի ազդեցութեան տակ: Յամենայն դէպս յայտնի է, որ գանգը (մարդաբանութեան մէջ խիստ մեծ դեր է խաղում) սկսել էր տարբերել Հնդկա-եւրոպացիների մէջ հէնց նրանց ծագումից սկսած:

Նախնական հնդկա-եւրոպական ժողովուրդն սկզբում անասնապահ է եղել, որովհետև այդ ժողովրդից սերւած ազգերի արիական և եւրոպական խմբերը ընտանի կենդանիների համար մեծ քանակութեամբ նման բառեր ունին. ընդհակառակն միայն Եւրոպացիները և Ասիայում Փոխզացիներն ու Հայերն են, որ երկրագործութեան համար ընդհանուր, նման բառեր ունին.

ուրեմն՝ այս երկրորդ խումբը դարձել է մշակող, երկրագործ, նախ քան իւր անջատումը. և այս դէպքը մեզ երկու նոր եզրակացութեան է յանգեցնում: Նախ՝ հաւանական է, որ Եւրոպացիները Հայերի և Փոլիւզիացիների հետ միասին (այսինքն՝ Centum ժողովուրդները) ապրել են աւելի երկար ժամանակում քան թէ Իրանցիներն ու Արիները (Satam ժողովուրդը). որովհետև հասարակական գիտութիւնները ցոյց են տւել, որ երկրագործութիւնը տնտեսական էվոլուցիայի վերջին աստիճանն է: Երկրորդ՝ այս տեղ մենք գտնում ենք մի ցուցմունք թէ հայերը ուղղակի ձրտեղից են ծագել: Մինչև հիմա մեր արած բոլոր ընդհանուր դիտողութիւններով ապացուցւում է, թէ հնդկա-եւրոպական բոլոր ցեղերի արմատը կազմող մի ցեղ է գոյութիւն ունեցել և ապրել իւր որոշ հայրենիքում. մեր ընդհանուր դիտողութիւնները միշտ էլ վերաբերւել են նաև հայերին, որոնք, ինչպէս ցոյց ենք տալիս, պատկանում են հնդկա-եւրոպական ցեղին: Այժմ մենք կարող ենք մի ենթադրութիւն անել. հայերի աշխատանքի տեսակը նկատի առնելով կարելի է ասել, որ հայերը այս նախնական ժողովրդից և նրա հայրենիքից են դուրս եկել. հիմայ մեզ մնում է աւելի լուսաբանել այս հարցը, որ հայերը ոչ հնդկա-եւրոպական մայր ցեղի ճիւղերից են

սերւում, ոչ էլ Ասիայում իրանցից առաջ տեղափոխւած ուրիշ ազգերից:

Ճինչպէս գիտենք, ասում է պ. Օ. Շրադէր, Փոլիւզացիներն ու Հայերը առաջին չեն եղել, որ բաժանւել են Թրակացիներից, որոնք հաստատուել էին Սև ծովի արևմտեան ափերի վրայ մինչև Դանուբից այն կողմը՝ դէպի հիւսիս. Թրակացիները ցեղական սերտ կապով կապւած են Իլլիրո—Ադաւանների հետ: Սրանից հետևում է, որ Հայերի և Փոլիւզացիների մէջ գոյութիւն ունեցող արիւնակցական անվիճելի կապերը առաջ են եկել Ասիա գաղթելուց առաջ. ուրիշ խօսքով՝ Հայերը օտար հողի վրայ Փոլիւզիացիներից առաջացած չեն, այլ՝ նրանց զուգահեռական մի ճիւղ են սերւած հնդկա-եւրոպական ընդհանուր ցեղից՝ Եւրոպայում:

Այստեղ իրար հետ սերտ կերպով կապւած երեք հարցեր են ծագում, որոնց չպէտք է շփոթել միմիանց հետ. ա) հնդկա-եւրոպական կոչւած ժողովրդի նախնական հայրենիքումն են ծնւել հայերը. բ) այնտեղ հայերը Փոլիւզիացիներից են ծնւել, ուրեմն՝ նրանց որդիներն են. գ) այնտեղ ուղղակի ընդհանուր նախնիքներից են սերւել և թւրեմն Փոլիւզիացիների եղբայրներն են: Անշուշտ միշտ էլ անհնարին կլինի ստոյգ եզրակացութիւններ ունենալ, առնւազն վերջին երկու հարցերի վերաբերմամբ՝ քանի ղեռ այդ

ժողովրդների լեզւի ուսումնասիրութիւնից զատ ուրիշ միջոցներ չեն հանդէս գայ: Սակայն՝ ձայնաւոր արձանների մանրակրկիտ մի ուսումնասիրութեան ցուցմունքների շնորհիւ կարելի է կանխատեսնել որոշ լուծումներ այս հարցերի վերաբերմամբ:

Իսկապէս՝ մենք հէնց հիմակւանից կարող ենք ընդունել, որ հայերը ծնւել են Հնդկա-Եւրոպացիների նախնական հայրենիքում, ազգակից են Փոխզիացիներին՝ առանց նրանցից ծագած լինելու, եթէ ընդունենք հայագէտներից ամենահեղինակաւորի՝ պ. Մէյէի եզրակացութիւնները: Նա հաստատում է, որ հայերէնը մի կղզիացած ճիւղ է, որը նոյնիսկ հնդկա-Եւրոպական ճիւղին պատկանող միւս լեզուների առաջացրած նորոթիւնների նման ոչինչ չունի ստեղծած. հայերէնը զարգացել է անաղարտ կերպով, առանց իրարից խիստ կերպով տարբերող բարբառների բաժանւելու և այն էլ առնւազն մինչև V դար Ք. յ.: Այս երևոյթը շատ հազւագիւտ է, որից կարելի է եզրակացնել, որ հայերը այդ ժամանակ դեռ ցրիւ չէին եկել, ինչպէս այդ լինում է յետագայում: Պ. Մէյէն նաև ընդունեմ է, որ Ք. ա. VI կամ VII դարուց սկսած հայերէնը բազմաթիւ փոխառութիւններ է անում մի ուրիշ լեզուից, որը տարբեր աղբիւր է ունեցել, որովհետև կան

հայերէն բազմաթիւ բառեր, որոնք չեն կարող կազմւած լինել հնդկա-Եւրոպական արձաններից: Պ. Մէյէն մտածում է, որ այդ բառերը առաջ են եկել «երկրի հին բնակիչների» լեզուից (Ք. ա. VII դարում գլխաւորապէս Սալդերն են եղել այդ բնակիչները, որոնց մասին յետոյ խօսք կլինի). յետոյ՝ որոշ կարևոր ցուցմունքներ գիտնականին բերում են այն եզրակացութեան, որ կլասիք հայերէնը վերջնականապէս կազմւած է եղել վանայ լճի շրջականերում (բնակւած Սալդերից):

Այս խնդրի առթիւ պէտք է նկատել, որ երբ մի ազգի ծագումն են որոշում հիմնւելով լեզուի վրայ՝ պէտք է միմիայն ամբողջովին նախահական, սկզբնական տարրերից եզրակացութիւններ հանել և ոչ թէ յետագայ փոխառութիւններից: Չնայած որ այս սկզբունքը շատ պարզ է, բայց՝ այնուամենայնիւ շատ հեղինակներ անուշադրութեան են մատնել և հայերէնի մէջ իրանական, հիտիտական վրացիական, խալդական և սեմիտական բազմաթիւ բառեր նկատելով ձգտել են վաղահասօրէն հետևցնել թէ հայերի և այդ ժողովրդների մէջ, ցեղական, արիւնացական կապ կայ: Պ. Մէյէն, որ աւելի զգուշ է, հայերէնի և կովկասեան բարբառների մէջ եղած աչքի զարնող նմանութիւնները վերագրում է միմիայն մեր թւականից առաջ եղած և ոչ թէ

հիմնական հայերէնին: Այս դիտողութիւններէց չի կարելի հետևցնել, որ հայկական ցեղը կովկասեան ծագում ունի, որովհետև աւելացնում է յիշեալ հեղինակը, Պարսիկները, որոնք անշուշտ Հնդկա-Եւրոպացիներեն, լեզու ական աւելի մեծ ազդեցութիւն են կրել իրենց երկրի նախնական բնակիչներից: Վերջապէս անյարմար կերպով արդէն շատ են առաջ տարել հայերէնի որոշ տարրերի և վրացերէնին յատուկ ձևերի նմանութիւնը, նոյնութիւնը: Պ Մէյէն կարծում է, որ վրացերէնի յոլովման բարդ ձևերը կարող են ազդած լինել հայերէնի վրայ միևնոյն երևոյթը այդտեղ պահպանելու համար. սակայն՝ այդ տեսակ բարդութիւն պահպանել է միւս լեզուներից շատերի մէջ առանց օտարի ազդեցութեան: Միւս կողմից՝ ճիշտ է, որ հայերէնի և վրացերէնի հնչիւնական զարգացումը նման է, սակայն՝ երբեմն այդտեսակ նմանութիւններ բոլորովին պատահական են լինում, օրինակ՝ հայերէնի և սանսկրիտի նմանութիւնը. յամենայն դէպս սրանք չեն վերաբերում ծագումը մօտեցնող հարցին: Մի ուրիշ լեզուագէտ կամեցել է աւելի առաջ գնալ. առանց հերքելու, որ հայերէնի նախնական հիմքը հնդկա-Եւրոպականն է՝ պ. Մարն աշխատում է ցոյց տալ թէ խալդերէնը (Խալդերն այդ մասնակ բնակչում էին Արարատի և Տաւրոսի մէջ) ոչ պակաս կարևոր մի աղբիւր է եղել հայերէնի համար և կարծում է, որ Խալդերը պատկանում են վրացիական ընտանիքին: Պ. Մարը մի շատ սերտ առնչութիւն է գտնում խալդերէնի և հայերէնի մեզ ծանօթ ամենահին բարբառի, այսինքն՝ Վանայ լճի շրջակայքում գտնուած արձանագրութիւնների լեզուի մէջ, որը առաջւայ խօսուին, կենդանի լեզուի մի մնացորդ է: Նրա կարծիքով այս հին հայերէնը Արիների երևան գալուց առաջ պէտք է եղած լինի և ուրեմն զերծ է շրջապատող հնդկա-Եւրոպական լեզուների ազդեցութիւնից: Եւ կովկասական այս ֆակտորը նրան նոյնքան էական է թւում, որքան միւսը: Նա հաւատացնում է, որ այդ ֆակտորը գտել, դուրս է բերել ուսումնասիրելով սեմիտական լեզուի և վրացերէնի (հետևաբար նաև հայերէնի ու խալդերէնի) մէջ իր դիտած յարաբերութիւնները: Նրա կարծիքով վրացերէնը ծագած պէտք է լինի սեմիտական լեզուներից. այս կերպով հայերէնն էլ զօրեղ կերպով սնուած պէտք է լինի սեմիտական տարրերից: Ահա այս նախապատրաստական աշխատանքն է, որ նրան մղել է հաստատելու թէ Խալդերի միջնորդութեամբ ազգակցութիւն կայ վրացիների և Հայերի մէջ: Սակայն՝ այդ ուսումնասիրութիւնները, որոնց մասին պ. Մարն ակնարկում է, դեռ չեն հրատարակել: Նա յայտարարում է, որ բազմաթիւ փաստեր է գրտել, որոնց չի կարողացել գետեղել իւր թւ-

յերէնի համար և կարծում է, որ Խալդերը պատկանում են վրացիական ընտանիքին: Պ. Մարը մի շատ սերտ առնչութիւն է գտնում խալդերէնի և հայերէնի մեզ ծանօթ ամենահին բարբառի, այսինքն՝ Վանայ լճի շրջակայքում գտնուած արձանագրութիւնների լեզուի մէջ, որը առաջւայ խօսուին, կենդանի լեզուի մի մնացորդ է: Նրա կարծիքով այս հին հայերէնը Արիների երևան գալուց առաջ պէտք է եղած լինի և ուրեմն զերծ է շրջապատող հնդկա-Եւրոպական լեզուների ազդեցութիւնից: Եւ կովկասական այս ֆակտորը նրան նոյնքան էական է թւում, որքան միւսը: Նա հաւատացնում է, որ այդ ֆակտորը գտել, դուրս է բերել ուսումնասիրելով սեմիտական լեզուի և վրացերէնի (հետևաբար նաև հայերէնի ու խալդերէնի) մէջ իր դիտած յարաբերութիւնները: Նրա կարծիքով վրացերէնը ծագած պէտք է լինի սեմիտական լեզուներից. այս կերպով հայերէնն էլ զօրեղ կերպով սնուած պէտք է լինի սեմիտական տարրերից: Ահա այս նախապատրաստական աշխատանքն է, որ նրան մղել է հաստատելու թէ Խալդերի միջնորդութեամբ ազգակցութիւն կայ վրացիների և Հայերի մէջ: Սակայն՝ այդ ուսումնասիրութիւնները, որոնց մասին պ. Մարն ակնարկում է, դեռ չեն հրատարակել: Նա յայտարարում է, որ բազմաթիւ փաստեր է գրտել, որոնց չի կարողացել գետեղել իւր թւ-



րականութեան մէջ: Հիմք կայ ենթադրելու, որ այս առթիւ բերած օրինակները, որոնց սեղմել է իւր *Քերականութեան* մէջ, ընտրովի պէտք է լինին և հեղինակի կարծիքով ամենից աւելի պերճախօս, սակայն՝ ուսումնասիրելով այդ օրինակներն անհնարին է ընդունել պ. Մարի համոզմունքները:

Արդեօք ապացուցած է այդ *Քերականութեան* մէջ, որ Վանայ լճի շրջականերում գտնուած արձանագրութիւնների լեզուն—որ վերագրում է հայերէն մի բարբառի—խալդական բնոյթ ունի. և յետոյ՝ այսպէս բացատրելով հանդերձ, այդ արձանագրութիւնները մօտ են վրացերէնին, այնպէս որ խալդօ-վրացական տարրը լինի վերջնական հայերէնի էական մասերից մէկը: Այս ենթադրութիւններից առաջինը դեռ սպասում է ապացոյցի. իսկ երկրորդը՝ դեռ շատ աւելի մութն է: Յիշեալ *Քերականութեան* մէջ հայերէնի և խալդերէնի մէջ եղած կարծեցեալ նմանութիւնը հաստատող ոչինչ չի ասուած: Վանայ լճի շրջակաների արձանագրական տեկտոնները դեռ հեռու են կատարեալ ճշտութեամբ լուսաբանելուց: Երբ այդ արձանագրութիւնները ճշտութեամբ կմեկնուեն, այն ժամանակ կարելի կլինի այնտեղ որոնել հայկական բառերի նոր, օրիգինալ ձևեր և ապա տեսնել թէ այդ նոր ձևերը խալդերէնից են ծագում թէ ոչ. այս բոլորից յետոյ պէտք է մի

նորնպիսի համեմատութիւն դնել խալդերէնի և վրացերէնի մէջ գիտենալու համար թէ արդեօք այդ հայերէն բառերը վրացերէնի մէջ էլ գտնուում են:

Պ. Մարն այս բոլոր պայմաններն արդէն իբրև եղած տւեալներ ընդունելով և ցանկալով ապացուցանել, որ հայոց լեզուն հէնց իւր կազմակերպութեան սկզբից շատ բան է փոխ առել խալդերից՝ նայում է խալդերէնի վրայ իբրև հայերի համար լեզու ներշնչողների (այստեղից, անշուշտ հետևում է, որ հայերը դրանցից սերւած կլինեն) և միաժամանակ Վրացիների նախաձյրերի: Սրանք ձրի ենթադրութիւններ են: Այս ձևով յանդգնութիւն չի լինիլ ծագման յարաբերութիւն հաստատել Հայերի և Իրանցիների մէջ այն պատրւակով, որ առաջինները բազմաթիւ բառեր են փոխ առել վերջիններից: Պ. Մէյէն խնամք է ունեցել գերծ մնալու այսպիսի հապճեպ, վաղահաս հետևութիւն անելուց, գիտենալով թէ համեմատաբար սրբան նոր ժամանակում պէտք է եղած լինի այդ փոխառութիւնը: Գ. յ. 66 թւականից սկսած մինչև 387 թիւը Հայաստանը կառավարեց Արշակունի մի հարստութեան ձեռքով. բայց՝ չի երևում, որ Պարթև ազնւականները—որոնք պէտք է հետևէին առաջին Արշակունի Տրդատ թագաւորին—կարողացել են բռնել հայ իշխանների

տեղը (սրանք ժառանգաբար նահանգների գլուխըն էին կանգնած և ունէին պետական պաշտօններ)։ որովհետև հայ պատմիչները Արշակունիների ժամանակ ազնւականութեան մէջ չեն յիշատակում և ոչ մի մի Պարթև անուն։ «Այս փոխառութիւնների թւականն որոշւած է նայելով թէ ինչ ձևով է կատարւել. իսկ այդ ձևը ցոյց է տալիս, որ այդ փոխառութիւնները եղել են ոչ թէ հին պարսկերէնից, այլ շափաղանց հին փէհլէվի լեզուից»։ Արշակունիներից շատ առաջ, պարսկական տիրապետութեան հէնց սկզբից իրանական տարրերն սկսում են մուտք գործել յաղթւած Հայաստան. և հայերէնի մէջ մենք տեսնում ենք դարձւածքներ, անուններ, նոյնպէս և կրօնական գաղափարներ, պրակտիկաներ, որոնք առաջ ևն եկել յաղթողներից։

Այսպէս՝ պ. Մէյէի *Քերականութիւնը* հետու մնալով Հայերին Վրացիների հետ կապելու ձրգտումից, ցուցադրում է այն բազմաթիւ հետքերը, որոնք մնացել են հայերի և հնդկա-եւրոպականի ազգակցութիւնից։ Այդ *Քերականութիւնից* իրօք երևում է, որ «հայերէն այն բառերը, որոնց կարելի է որոշ ճշմարտութեամբ համարել հնդկա-եւրոպական ծագումից, չորս հարիւրի չեն հասնում»։ բայց՝ այս քանակն այնքան էլ նշանակութիւն չունի եթէ այդ բառերն ամենից էականներն են այդ ժողովրդի լեզուի

մէջ, որը դեռ վայրենի լինելով անշուշտ քիչ գաղափարներ կունենար։ Գալով հայերէնի կերպարանաբանութեան, որը իւր կարևորութեամբ յետ չի մտւում բառարանից, ընթացել է հնդկա-եւրոպական լեզուների ընդհանուր ճանապարհով. օրինակ՝ հոլովման մէջ պահել է «նիւթական գոյականների «ն» կազմութեամբ հոլովը. իւր սեփական, մասնաւոր հոլովումների մէջ պահել է այն յատուկ ձևերը, որ ունէին հնդկա-եւրոպերէն «ցուցականները, հարցականները, անորոշները, և այլն...»։ պահել է հնդկա-եւրոպական հոլովներն իրանց իմաստով և մի նախըլիր յաւելումով տեղական իմաստը ցոյց տալու համար. նոյնպէս էլ խոնարհումների մէջ պահել է մի «ակնյայտնի զուգահեռականութիւն» լատիներէնի և յունարէնի իւր հետ ցրիւ գալուց յետոյ՝ հին ժամանակների բարդութիւնը վերածելով է երկու էական ձևերի—ներկայի μένω, maneo և օրիստի ἔμεινα, mansi, հայերէն մնամ և մնա-ցի. պահպանել է «արմատական օրիստի» հնդկա-եւրոպական ծագումը չհաշւած հայերէնի ստորագասականը և բազմաթիւ այլ նման մանրամասնութիւններ։

Այս բոլոր դէպքերից—որոնք գալիս են իրենց հաշիւը մաքրելու միայն յետագայում գանազան լեզուներից փոխ առած հնչիւնական սիստեմների հետ—հետևում է, որ հայերէնը ծա-

գումով հնդկա-եւրոպական է և չի բղթում ոչ
 Հիտիաներից, ոչ խալդերէնից, ոչ վրացերէնից
 և ոչ էլ սեմիտական մի լեզուից: Դեռ սրանից
 աւելին՝ այդ դէպքերը կարող են ենթադրել
 տալ, թէ հայերէնն ուղղակի կերպով բաժանւել
 է հնդկա-եւրոպական միակ լեզուից, երբ նա
 դեռ չէր բաժանւել ութ խմբերի: Մենք
 դեռ դրական կերպով չենք կարող ասել, թէ այդ
 այդպէս է. բայց՝ կարելի է վերոյիշեալ երկու
 հարցերը՝ թէ հայերէնը ծագում է Փոփոքիա-
 ցիներից կամ իրանական լեզուից, բոլորովին մի
 կողմ դնել: Թէ հայերէնը ծագում է փոփոքերէ-
 նից այդ ոչ մի հիմք չունի, որովհետև Փոփո-
 քացիների լեզուն, ինչպէս պ. Մէյէն է նկա-
 տել, մեզ բոլորովին անծանօթ է:

Պ. Մէյէն սրանից եզրակացնում է, որ բա-
 նասիրութիւնը չի կարող հաստատել յունական
 աւանդութիւնը:

Սակայն՝ մենք էլ նկատենք, որ նա չի էլ
 հակասում այդ աւանդութեան, որ մեզ սո-
 վորեցնում թէ Արմէնները գալիս են միևնոյն
 երկրից ինչ որ Փոփոքացիները, թէ հայերը
 բնակւում էին այս ընդհանուր հայրենիքում
 նախ քան Փոփոքացիների հետ Ասիա անցնելը,
 թէ այս երկու ցեղերի լեզուները նման են և
 փոփոքիական շատ վարձաձեւեր գործ են ա-

ծում հայերէնի մէջ, թէ սպառազինութիւնն ու
 ձի նստելու ձևը նոյն են եղել և այլն: Իսկ
 այս բոլորը ցոյց են տալիս արիւնակցութիւն և
 ոչ թէ ծագում, մէկը միւսից սերւելը:

Գանք իրաներէնին. երկար ժամանակ նա ըն-
 դունւած է եղել իբրև առաջին աղբւր հայե-
 րէնի համար. և սրանից դեռ մի քանի տարի
 առաջ այս բանից եզրակացնում էին թէ հա-
 յերը ծագում են իրանական ճիւղից, որը, ինչ-
 պէս յայտնի է, հնդկա-եւրոպական արմատից
 է: Ճշմարտանման չի լինիր, եթէ ասենք նոյն-
 իսկ որ այդ իրանական կոչւած շառաւիղը Կաս-
 պից ծովի հիւսիսային և արևելեան կողմերով
 եւրոպայից Ասիա գաղթելուց յետոյ՝ Բօսֆօրի
 կամ Եգէեան ծովի վրայով Թեսալիայից եկող
 հայերին հաղորդած կլինի իր արիւնը, իր ո-
 գին: Այս երկու լեզուների համեմատութիւնը
 շատ պայծառ կերպով ցոյց է տւել, որ այդ
 տեսակ բան չի եղել:

Հայերէնը, իսկապէս, բուն եւրոպական
 լեզուններին յատուկ բնորոշ գծեր ունի և ոչ
 թէ իրանական լեզուներին: «Իրանական լեզու-
 ները պարզ կերպով որոշում են հնդկա-եւրո-
 պական միւս բարբառներից հնչիւնական երեք
 փոփոխութեամբ. ա) հնդկա-գերմանական (հնդ-
 կա-եւրոպական) լեզուների մէջ ε, η երբ օ, ω
 երբ α, α-երի քանակական տարբերութիւնները

պահպանել են ընդհանրապէս. այն ինչ իրաներէնի մէջ ε , o և α հաւասարապէս դարձել են α , իսկ η , ω և $\tilde{\alpha}$ դարձել՝ $\tilde{\alpha}$. այն ինչ հայերէնէ պահպանել է համապատասխան երեք բաց հնչիւնները և նոյնիսկ առաջին, ε -ն. — բ) հնդկա-եւրոպական նախնական, սկզբնական հընչիւնը՝ «Հնդկա-Գերմանական (α), շվա (schwä)»-ն եւրոպական ճիւղում դարձել է a , իսկ Իրանական ճիւղի մէջ՝ i . — գ) i , u ձայնաւորներինց յետոյ, նոյնպէս և կսկորդային ու կակուղ բաղաձայններից յետոյ s հնչիւնը դարձել է z (ζ) միմիայն իրանական լեզուների մէջ»։ Միւս կողմից՝ հակառակ սորան՝ սկզբնական l -ը մնացել է նոյնը եւրոպական ճիւղում, մինչ դեռ իրանական լեզուների մէջ դարձել r , որը չպէտք է շփոթել \Re ի հետ։ Այս վերջին հնչիւնը՝ l -ն նոր ժամանակներում հայերէնի մէջ դարձել է յունական կամ լատինական l . իսկ նախնական հայերէնի մէջ l -ն մնացել է նոյն *):

Նոյն բանն է և միւս օրէնքների համար, հայերէնն ամբողջապէս ընթացել է եւրոպայում

*) Հիւլլաման. Armenische Studien, 82 եր. օրինակներ. vylku հնդկա-եւրոպական բառը դարձել է սանսկրիտ vrka, զենտերէն՝ urka, պարսկերէն, gurk իսկ յունարէն մնացել է Lukos, լատիներէն lupus: Գոթերէն vulf, Սլավոներէնն vluku, վերջապէս հայերէն gail (գայլ):

կազմակերպւած լեզուների էվոլուցիայի ձանապարհով և ոչ թէ Իրանում ձևակերպւածների։

Մենք չենք կարող երկար կանգ առնել. ձեռնհաս հեղինակների և մասնաւորապէս պ. Հիւլլամանի գրւածքները հաստատում են այն ընդհանուր օրէնքը, որ հայերէնը պահպանել է եւրոպական ձայնական սխառեմը նոյնքան պարզ կերպով որքան գերմանական կոչւած լեզուները (սրանց թւում նաև յունարէնն ու իւր ճիւղերը) ու իրանական լեզուների բնորոշ գծերից և ոչ մէկը չունի։ Վերոյշեալ հեղինակը՝ հակառակ պ. Ֆրիդրիխ Միւլլէրին և Դը Լակարդին, եզրակացնում է, որ հայերէնը չի պատկանում իրանական լեզուներին, այլ նա ծագել է մայրցեղի եւրոպական ճիւղի խօսած լեզուից։ Պ. պ. Միւլլէրն ու Դը Լակարդը՝ այս երկու բանասէրները գտնելով բազմաթիւ իրանական բառեր հայերէնի մէջ սխալւել են՝ երբ հասել են հայերէն նախնական տարրերին և դրանց վերաբերմամբ վճիռներ կայացրել։ Պ. Հիւլլամանը ցոյց է տւել, որ այդ անվիճելի պարսկական բառերը առնւած են փէհլէվերէնից՝ Պարթևների դարաշրջանի միջին պարսկերէնից, ուրեմն իսկական հայերէնի կազմակերպութիւնից յետոյ։ Այս բանում համոզւելու համար բաւական է իրար կողքի դնել, համեմատել այն ածանցւած բառերը, որոնք այս երկու լեզուների մէջ մտել են հնդկա-

եւրոպական մայր լեզւի արմատներից և ոչ թէ մէկը միւսից բղխելով, որից յետոյ պարզ կլինի, որ հայերէնը միշտ ընթացել է եւրոպական լեզուների ճանապարհով, իսկ պարսկերէնը՝ իրանականի. օրինակի համար leik'-օնախնակսն արմատը սանսկրիտում դարձել է rotsis, գենտերէնում՝ raot-sah, փէհէլվի ro:ts (օրւայ անունն է) և ro:tsik (մի օրւայ համար ապրունտ). ընդհակառակը՝ հայերէնը, որը յետագայում փոխ է առել այս վերջին ro:tsik ձևը, սկզբնական ժամանակներում միևնոյն արմատից դուրս է բերել լոյս գոյականը, ինչպէս յունարէնը λευκός ածականը և լատիներէն՝ lux գոյականը: Ուրիշ բազմաթիւ օրինակներ ապացուցանում են այս օրէնքը, որը հէնց այժմևանից կարելի է համարել ընդհանուր և առանց տատանելու դրանից եզրակացնել, թէ հայերը Իրանցիների հետ ոչ մի ուրիշ կապ, մերձաւորութիւն չունեն, բացի հեռււոր, ընդհանուր ծագումից: Հայերի ուրիշ ցեղերի հետ խառնելը և դրանց խօսած լեզուներից փոխառութիւններ անելը տեղի է ունեցել Ասիա անցնելուց յետոյ. մենք կփորձենք այս Պատմութեան ընթացքում որոշել թէ մտաւորապէս զր դարաշրջաններում են կատարւել դրանք:

Բացի այս հետքերից, որոնք նկատւել են մասնագէտներից իբրև վճռական փաստեր, բա-

նասիրութիւնը գտել, վերականգնել է որոշ թուով աշխարհագրական անուններ; որոնք հնարաւորութիւն են ստեղծում հետևելու հայերի գաղթին Օլիմպոսից ուղղակի դէպի Արարատ: Պ. Շրադէր արդէն իբրև ճշմարտութիւն է ընդունում, որ Հայերն Իլլիւրիայի բնակիչների և Թրակիայի գաղթականների հետ միասին կազմել են առաջաւոր Ասիայի գլխաւոր ազգաբնակչութիւնը: Հին աւանդութեան համաձայն այս հեղինակը Հայերին համարում է փոխգիական ծագումից և ուղղակի Եգէեան ծովի ափերից բերում է դէպի այն բարձրավանդակները, որտեղից Եփրատը, Տիգրիսն ու Այիւսն են սկիզբն առնում: Այս բնակավայրում Հայերին բաժանւած է համարում Իրանցիներից մի ուրիշ ազգով, որը ոչ հնդկա-եւրոպական է, և ոչ էլ սեմիտական: Այդ ազգը կազմում են Ուրարտացիները, որոնց մասին կրիստոսենք իւր տեղին և կանւանենք իրենց իսկական՝ Սալդ անունով: Այս խնդրով զբաղւած համարեա միւս բոլոր հեղինակների եզրակացութիւնները այսպէս են. Եթէ հաւատանք այս ամենահեղինակաւոր և ամենանոր հետազօտողների համարեա թէ ընդհանուր միաձայնութեանը՝ պէտք է զրա հետ միասին ընդունենք, որ Հայերը հաւանօրէն Ք. ա. երեսուներորդ և քսանուվեցերորդ դարերի միջոցներում Եգէեան ծովի, գուցէ Մարմարայի, մի ափից ուղղակի

միւս ափն են անցել թրակիական և փոխգիական ընտանիքների հետ միաժամանակ, կամ մի քիչ ուշ թէ առաջ, որի մասին ոչինչ չի կարելի իմանալ: Նրանք կարողացել են Դարդանելի կամ Բուֆօրի նեղուցն անց կենալ միմիայն թեթև նաւակների օգնութեամբ: Այստեղից կամաց-կամաց տարածոււմ են Պաֆլագոնիայի գանազան կողմերը:

Ահա այս ժամանակից սկսած Հայերը դէպի արևելք կատարած իրանց շատ դանդաղ գալիթի ընթացքում գետերի, լեռների, նոյնիսկ մի քանի քաղաքների իսկական հայերէն անուններ են տւել, որոնք հասել են մեզ առանց խիստ, անճանաչելի դառնալու չափ անդադուելու, փոփոխուելու: Հայերը այի կամ աղի (հնդկա-եւրոպական արմատից, որի յունարէնը դարձել է (ἄλις) անունն են տւել Փոքր-Ասիայի ամենամեծ գետին, որի Այիւս անունը Արևելքի պատմութեան մէջ լիքն է: Աւելի դէպի արևելք գնալով նրանք գայլ անւանեցին այն փոքրիկ գետը, որին Յոյները ճանաչում էին միլենոյն անունով. Յոյներն այս բառի արմատն արտասանում էին λουκος: Հայերն անցնում են Զատալա անցքը, որպէսզի վերջապէս Գայլի հովտից Ճորոխի հովիտը հասնեն:

Լեռներ նշանակող բառերը պակաս համոզեցուցիչ չեն. Փոքր-Ասիայի հիւսիսային գո-

տում, Բիւթանիայումն է Օրմինիոն լեռը, որը Արմէնիոնի աղաւաղումն է. յունարէնի մէջ Արմէնիոն նման ձևը մի ուրիշ գագաթի համար է եղել, որը Այիւս գետի ակունքների մօտն է գտնուել: Թեսալիայում տեսանք Արմէնիոն քաղաքը, բացի այդ՝ Ասիայում գտնում ենք Հարմօնիօնը, Սինոպի մօտ. սրա յունական տառադարձութիւնը փոքր ինչ կասկածելի է, բայց՝ դարձեալ ազդեցիկ: Մանրամասնութիւնները որքան էլ մեզ տատանեցնեն, այնուամենայնիւ այս բոլոր փաստերն արդէն բաւականաչափ համոզեցուցիչ են: Զարմանալի չէ, որ Հայերը իրանց ճանապարհի վրայ պարզ հետքեր թողած լինեն. այդ բանի համար նրանք ժամանակ ունեցել են. 15 կամ 20 դար են գործ դրել Փոքր-Ասիայի երկարութիւնը կտրելու համար, որովհետև մենք յետոյ կտեսնենք, որ Արարատի և Տաւրոսի մէջ գտնուած գաւառում նրանց հաստատուելն սկսւել է VII դարում Ք. ա.:

Վերջապէս՝ մենք կարող ենք վերջացնել այս գլուխը մի ընդհանուր դիտողութեամբ, որի հետ համաձայն են Հայերի հնդկա-եւրոպական ծագումն ապացուցանող բոլոր փաստերը: Հայերը Փոքր-Ասիա գաղթելով հետևել են միմիայն այն ձգտման, որը չափազանց շեշտուած է Արևելք գնացող Բալկանեան ժողովրդների խումբերից մէկի մէջ: Ուրիշ տեղերից գիտենք, որ

այս վայրենիւներից ոմանք անցել են Բօսֆօրով,
իսկ շատ ուրիշներ՝ Հելէսպօնտոսով: «Դարդան-
ներին կարելի է պատահել Իդայի շուրջը, նոյն-
պէս և Աքսիօսի եզերքում: Մակեդոնացի կեր-
բենները Իլիօսի մօտ Տրօայի մի գաւառն են
կազմել»:

Մեր այս վիճաբանութիւններից կարելի է
եզրակացնել, որ Հայերը հետևելով Փոխզիացի-
ներին անցել են Ասիա, միառժամանակ բնակ-
ւել են նրանց հետ — թերևս շատ դարեր — և յետոյ
այդտեղից դուրս են եկել Փոքր-Ասիայից դէպի
Արևելք իրանց գնացքը շարունակելու: Դեռ
վերջերս կարծում էին, որ Հայերի Փոխզիացից
գաղթելը պէտք է տեղի ունեցած լինի VII դա-
րու վերջին: Սակայն՝ մենք ստիպւած ենք այս
թիւը զգալի չափով յետ մղել, որովհետև նորե-
րս գտնւած Մենուագի մի արձանագրութիւն
ցոյց է տալիս, որ Հայերը VII դարում Կապա-
դովկիայում են եղել: Քանի որ Հայերի ա-
ռաջխաղացութիւնն երբէք տեղի չի ունեցել զէն-
քի ուժով, յանկարծակի, միւս կողմից՝ մեզ յայտնի
տօկումէնտներից — որոնք զուտ զինւորական
գործողութիւններին են վերաբերում — ոչ մէկը
աւելի շուտ չի խօսում Հայերի մասին, ու-
րեմն՝ նրանք պէտք է առաջ խաղացած լինեն
կամաց-կամաց, իբրև խաղաղ կօլօններ, դուրս
գալով Փոխզիացից մօտ IX դարում:



Շուտով լոյս կը տեսնի

ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿԸ՛

ՀԱՅԵՐԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ



Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտեմբերգ» գրախանութ.

~~1020~~

~~1120~~ . 11

« Ազգային գրադարան



NL0419277

